Հաղորդումներ

ՄԻ ԱԿՆԱՐԿ Ց. ՀԱԶԱՐԵԱՆԻ ՀԱՒԱՔԱԾՈՑԻ ՎՐԱՑ

Լ. Գ. ՄԻՆԱՍԵԱՆ

Նիւ Եորքում գտնուածս միջոցին, 1972 թ.ի ամրան, հնարաւորութիւն ունեցայ մի քանի անգամ լինելու Պր. Յարութիւն Հաղարեանի մօտ եւ հաճոյքով դիտելու նրա հաւաքածոները։

Ամերիկայում կան հայկական մշակոյթին պատկանող այլ հաւաքածոներ կազմողներ եւս, որոնցից յիշենք Դոկտ. Զարեհ Պտուլեանի հայկական դրամների, եւ բանասէր Յարութիւն Քիւրտեանի ձեռագրերի, յախճապակիների եւ այլ իրերի հաւաքածոները։

Յարութիւն Հաղարեանի հաւաքածոն, իր տեսակի մէջ ինձ համար աւելի շատ հետաքրքրութիւն ունէր, քանի որ այնտեղ՝ այլ իրերի հետ կային նաեւ աւելի քան 80 հատոր հայերէն դրչագրեր, ինչպէս եւ մագաղաթեայ հին պատառիկներ, Կուտինայի եւ հայ արուեստին պատկանող յախճապակեայ այլ իրեր, տպագիր դրքեր, հայ եւ եւրոպացի նկարիչների կտաւներ, թերթեր, ամսագրեր եւ այլն։

Երբ առաջին անգամ եղայ այնտեղ, ինձ այնքան հետաքրքրեցին այդ հաւաքածոները, որ շուրջ եօթէն ութ ժամ ինձ պահեցին իրենց մօտ։ Ինձ խիստ հետաքրքրեց նաեւ իր՝ Յարութիւն Հաղարեանի անձը, որպէս հայկական արուեստի մի ջերմ բարեկամի, որպէս հայկական եւ ընդհանրապէս մարդկութեան մշակոյթի բեկորները կորուստներից ու ոչնչացումներից փրկողի, եւ որպէս հայ տիպիկ առեւտրականի։

Թէեւ հակառակ իմ ճիգերի, ինձ հնարաւոր չեղաւ, որեւէ իր ապահովել նրա հաւաքածոյից Նոր Ջուղայի մեր Թանգարանի հա-

Թաւրիզի 1311 թ·ի մանրանկար

Թաւրիզի 1311 թ·ի մանրանկար

Կուտինահայ յախճապակի

«Երեք Անձ» լեռան մանրանկարը

մար, յատկապէս ինձ խիստ հետաքրքրող Խոջա Նալարին վերագրուող յախճապակեայ պնակը հայերէն արձանագրութեամբ, բայց հէնց այդ իրերի ու արուեստի գործերի տեսքն ու Հաղարեանի հաւաքման սէրը, ինձ մեծապէս հաճոյք եւ ուրախութիւն պատճառեցին։

Պր. Հաղարեանը յայտնի է նաեւ իր գրչագրերի ու գրքերի նուիրատուութեամբ Երեւանի Մատենադարանին, ուր ունի իր անունով ձեռագրերի առանձին բաժին, որ պատիւ է իրեն։

Հաղարեանի ձեռագրերի հաւաքածոյի մէջ կան թէ՛ Հին եւ թէ՛ Նոր Ջուղայում գրուած գրչագրեր, որոնց մի քանիսի համառոտ տեղեկութիւնները բերում ենք ստորեւ.

1. ԱՒԵՏԱՐԱՆ – Ժամանակը՝ 1587 թ., գրչութեան վայր՝ Հին Ջուղա, գրիչ եւ ծաղկող՝ Յակոբ Սարկաւագ Ջուղայեցի, նիւթ՝ թուղթ (թիւ 37)։

Համաձայն այս գրչագրի յիշատակարանի, Հին Ջուղայում եղել են Ս. Աստուածածին, Ս. Հրեշտակապետաց, Ս. Ամենափրկիչ եւ Ս. Յակոբ անուններով եկեղեցիները, որոնց անուններով եւս Նոր Ջուղայում յետոյ կառուցուել են նոր եկեղեցիներ։ Ներկայիս, բացի Ս. Հրեշտակապետացից, միւս բոլորը կանգուն են։

2. ԱՒԵՏԱՐԱՆ – Ժամանակ՝ 1645 թ., գրչ. վայր՝ Նոր Ջուղա, գրիչ՝ դպիր Մարգար, նիւթ՝ թուղթ (թիւ 20)։

3. ԱՒԵՏԱՐԱՆ – Ժամանակ՝ 1668 թ., գրչ. վայր՝ Նոր Ջուղա, գրիչ՝ Յովհաննէս Սարկաւագ, նիւթ՝ թուղթ (թիւ 18)։

Հաղարեանի ձեռագրերի հաւաքածոյի մէջ է պահւում նաեւ 1311 թ.-ին Թաւրիզում, Թորոս Սարկաւագի ձեռքով գրուած մի ձեռագրի երեք թերթիկը, որոնցից մէկի նկարը ներկայացնում է «Երեք անձ» կոչուած լեռը, ուր Թորոսը ծնկաչոք աղաչում է Յիսուսին, որ իրեն տայ աւելի միտք ու կարողութիւն Աստուծոյ փառքը երգելու համար։

Ստորեւ այդ գրութիւնը։

«Տէր Յիսուս գթեա ի յիս սրբեա ըզմիտս եւ զսգայարանս. ես Թորոս ծառայ քո եմ տրուպ անպիտանս. Տաճարացո երրորդութեանդ զիս աւթէվանս. երգել զփառս ընդվերին զաւրս միշտ յաւիտեանս» (1)։

Հաղարեանի հաւաքածոյի մէջ կարեւոր տեղ են բռնում նաեւ հայ եւ եւրոպացի նկարիչների գործերը, ինչպէս՝ Սարգիս Խաչա-

1. Բացուել են միայն բնագրի մի քանի համառօտագրութիւնները։

տլրեանի, Վանս Խոջաբէդեանի, Միհրան Սարալեանի, Մանուէլ Թոլիդեանի, Լիդար Շահէնի, Անիբրալ Քարատղի, Գիւլլո Ռոմանոյի, Քարաւալիոյի, Գիովաննիի, Փաօլո Փանինիի, Միքայէլ Ռիսբրախի, Իքոնի, Թոլ Գաուլօխսի եւ այլն։

Հազարեանի հաւաքածոն, ուր կան նաեւ եւրոպական ու այլ արուեստի գործեր, սկսեալ 1938 թուից մինչեւ 1972 թիւը, ունեցել է 47 զանազան ցուցադրութիւն, հայկական եւ օտարազգի մշակութային միութիւնների, ամերիկեան զանազան թանգարանների, համալսարանների, արուեստից հիմնարկների, հայկական կազմակերպութիւնների, հրէական թանգարանի եւ այլ կարեւոր հաստատութիւնների կողմից, որոնց առթիւ տպագրուել են ուղեցոյց ցանկեր, դիտուել հազարաւոր այցելուների կողմից, ինչպէս եւ ստեղծել յատուկ հետաքրքրութիւն հայ ժողովուրդի ու նրա հնադարեան արժէքաւոր մշակոյթի շուրջ։

Կազմակերպուած 47 ցուցահանդէսներից 33-ը տեղի են ունեցել Նիւ Եորքում, իսկ միւսները՝ Նիւ Ջըրսիում, Տիթրոյդում, Ֆիլադելֆիայում, Պոսթոնում եւ այլ քաղաքներում, ինչպէս եւ Գանադայում։

Եղել են տարիներ, ինչպէս 1950 թ.-ը, որ մէկ տարուայ ընթացքում, տեղի է ունեցել հինգ ցուցադրութիւն։

Յարութիւն Հազարեանի հաւաքածոների մէջ, յատուկ արժէք են ներկայացնում նրա յախճապակիները, որոնցից մի քանիսը պատրաստուած են Կուտինայի հայերի կողմից, որոնց մասին բանասէր Յարութիւն Քիւրտեանը «Գեղունի»-ի մէջ ունի մի ուսումնասիրական արժէքաւոր յօդուած։

Կուտինահայերի պատրաստած յախճապակիներից մէկը պատկանում է մի տան կառուցումին, որի վրայ գրուած է.

«Այս է պալատս պատվական
Երեք եղբարք աշխատեցան
Սարգիս Նահապետ Մաղաքիան
Եւ հօրք հանգօցեալ Երեման
Բարեխոս լինի Կոյս Մարիամ
Թվին ՌՃՁԶ (1737)»։

Հազարեանի հաւաքածոյից որոշ իրեր օգտագործուել են նաեւ ուրիշների ցուցադրութեանց մէջ։